



Support for Improvement in Governance and Management

A joint initiative of the OECD and the EU, principally financed by the EU

Կարճ գրություն 17

Օգոստոս 2011

Պետական գնումներ

Էլեկտրոնային գնումներ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ի՞նչ է էլեկտրոնային գնումը:
- Ինչու՞ օգտագործել էլեկտրոնային գնումը:
- Խնայողությունների և բարելավումների օրինակներ
- Ինչպե՞ս է Հրահանգը օժանդակում և խրախուսում էլեկտրոնային գնումները:
- Գնումների գործիքներ
- Էլեկտրոնային գնումների համակարգերի ներկայացման և գործարկման վերաբերյալ գրություն:

Ի՞նչ է էլեկտրոնային գնումը: Պարզագույն առումով, “էլեկտրոնային գնումը” թղթային ընթացակարգի փոխարինման համար համընդգրկուն հասկացություն է՝ տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված հաղորդակցությամբ և գնումների ողջ ընթացակարգում գործողությամբ: Էլեկտրոնային գնումը կարող է հանդիսանալ գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու և գնման արդյունավետության օժանդակման գործիք:

Էլեկտրոնային գնման տեխնոլոգիաները և գործընթացները կարող են օգտագործվել, անհրաժեշտության դեպքում, գնումների գործընթացի տարբեր փուլերում, ներառյալ՝ հայտարարության հրապարակումը, մրցութային փաստաթղթերի տրամադրումը, հայտերի ներկայացումը, գնահատման գործընթացը, շնորհման ծանուցումը, պատվիրումը, հաշիվ-ապրանքագրի դուրս գրումը և վճարումը:

Ինչու՞ օգտագործել էլեկտրոնային գնումները. Էլեկտրոնային գնումների համակարգերի և գործընթացների օգտագործումը կարող է հանգեցնել մի շարք առավելությունների, ներառյալ՝

- Առանձին գնումների **նվազեցված վարչական ծախսեր,**
- **Ճկուն** գնումների ընթացակարգեր,
- **Ավելի արագ իրականացվող** գնումների ընթացակարգեր,
- **Ավելված թափանցիկություն՝** առանձին գնումների հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման և լայն առումով մրցույթների ավելի հստակ և ընդարձակ պատկերման միջոցով,
- **Գնումների ավելի լավ դիտանցում,**
- **Միջսահմանային մրցակցության խրախուսում՝** փաստաթղթային գնումների գործընթացների առաջացրած խոչընդոտների վերացման միջոցով,
- **Կենտրոնացված գնումների զարգացման օժանդակում,** ինչը հանգեցնում է գնումների ծախսատար գործառույթների հնարավոր նվազեցման և գնումների իրականացման մեջ մասշտաբի էֆեկտից առավելությունների ստացման,

- **Ավելի լայն վարչական արդիականացումը և պարզեցումը**, ինչը խրախուսում է զանազան վարչական գործընթացների ներդրումը, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների լուծումների տարածումը կառավարության և հիմնականում հասարակության մեջ և դրանց միջոցով:

Եվրոպական Հանձնաժողովը իր՝ *ԵՄ-ում էլեկտրոնային գնումների օգտագործման տարածման վերաբերյալ Կանաչ փաստաթղթում* էլեկտրոնային գնումների ներմուծման օգուտի օրինակները բերում է հետևյալ կերպ.

Խնայողությունների և բարելավումների օրինակներ.

Իտալական Էմիլիա Ռոմանա գործակալություն ինտերսենտ ԷԸ-ն առաջարկում է էլեկտրոնային գնումների ծառայություններ, ներառյալ էլեկտրոնային շուկա, էլեկտրոնային ցուցակներ և էլեկտրոնային աճուրդներ և այժմ 539 վարչությունների սկզբնակետն է (տեղական գործակալությունների 90 տոկոսը): 2008 թ.-ին այն իրականացրել է 419 միլիոն եվրո արժողությամբ գործարքներ, ունենալով 67.5 միլիոն եվրոյի արդյունավետություն և ժամանակի խնայողություն՝ 45 տարի:

Ավստրիական Ֆեդերալ Գնումների Գործակալությունը կենտրոնացրել է ֆեդերալ մարմինների համար գնումները՝ էլեկտրոնային գնումների գործառույթների միջոցով: 2008 թ.-ին այն ունեցել է 178 միլիոն եվրո խնայողություն՝ 830 միլիոն եվրո գնումների ծավալի դեպքում: Օգուտը զգալիորեն գերակշռում է պահպանման տարեկան ծախսը՝ 5 միլիոն եվրո, որը գնումների 3 տոկոսից քիչ է:

2005 թ.-ի փետրվարի 1-ի դրությամբ, Դանիայի պետական պատվիրատուները կարող էին ընդունել միայն էլեկտրոնային հաշիվ-ապրանքագրեր: Այս բարեփոխումն ազդեցությունն ունի տարեկան մոտավորապես 15 միլիոն հաշիվ-ապրանքագրերի վրա և կիրառվում է ողջ հանրային ոլորտի նկատմամբ, նախարարություններից մինչև նախադպրոցական հաստատությունները: Էլեկտրոնային հաշիվ-ապրանքագրերի օգտագործումը սպասվում է, որ կխնայի տարեկան 100 միլիոն եվրո, ի լրումն ներքին վարչական ծախսերի խնայողության:

Նորվեգիայում Ehandel պլատֆորմն օգնում է պետական մարմիններին՝ հասնել պատվերի պատրաստման, ապրանքների ստացման և հաշիվ-ապրանքագրի դուրս գրման ժամանակի 20-40 տոկոս նվազեցման և մատակարարման գնի մեջ 2-10 տոկոսի սահմաններում խնայողության:

Մեծ Բրիտանիայում, Գնումների Լուծումներ Էջը իր 2008/09 տարեկան հաղորդման մեջ հայտնել է, այն օժանդակել է 5 միլիոն ֆունտ ստերլինգ արժողությամբ վաճառքի, ունենալով 732 միլիոն ֆունտ ստերլինգ խնայողություն: ՄԲ-ն նաև հայտնել է, որ էլեկտրոնային աճուրդի օգտագործման միջոցով այն ունեցել է խնայողություններ, որոնք հաճախ գերազանցել են 10 տոկոսը (և նույնիսկ հասել են 45 տոկոսի) և վերջերս հայտնեց իր ծրագրերը՝ էլեկտրոնային աճուրդի օգտագործման միջոցով խնայել մինչև 270 միլիոն ֆունտ ստերլինգ մինչև 2011 թ.-ը:

Պորտուգալական ուսումնասիրությունը համեմատել է հանրային աշխատանքների կատարման լավագույն հայտերը 50 Պորտուգալական հիվանդանոցների համար՝ 2009 թ.-ի (օգտագործելով թղթային համակարգեր) և 2010 (էլեկտրոնային գնումների օգտագործմամբ): Այն եզրակացրեց, որ 2010 թ.-ին ձեռք է բերվել ծախսերի 18 տոկոս նվազեցում՝ էլեկտրոնային գնումների

հետևանքով ավելացված մրցակցության պատճառով:

Կարևոր է նշել, որ խնայողությունները, ինչպես նշված է վերևում, հիմնականում ձեռք են բերվում էլեկտրոնային գնումների, շրջանակային համաձայնագրերի և կենտրոնացված գնումների համակցության օգտագործմամբ: Հետագա տեղեկատվության համար, տե՛ս *Գնումների վերաբերյալ կարճ գրություն 19-Շրջանակային համաձայնագրեր և Գնումների վերաբերյալ կարճ գրություն 20-Գնումների կենտրոնացված մարմիններ*:

Եվրոպական Միությունը հատուկ դրույթներ է ներառել Հանրային Ոլորտի Հրահանգում (2004/18/ ԵՀ Հրահանգ) (“Հրահանգ”)՝ օժանդակելու և խրախուսելու, բայց ոչ պարտադրելու մրցութային գործընթացներում էլեկտրոնային գնումների օգտագործումը: Ներքոնշյալ կգտնեք այս դրույթների մանրամասները:

Ինչպե՞ս է Հրահանգը օժանդակում և խրախուսում էլեկտրոնային գնումները

Էլեկտրոնային գնումների օգտագործման աստիճանը տարբեր է՝ մի շարք գործոնների պատճառով, ներառյալ՝ տեղական օրենսդրությունը, հասանելի տեխնոլոգիաները և որոշակի փուլում էլեկտրոնային գործընթացի օգտագործման հարմարությունը կամ գնումների առարկան: Այս կարճ գրությունը ցուցադրում է, թե ինչպես է Հրահանգը նախատեսում և խրախուսում էլեկտրոնային գնումները գնումների գործընթացում, ինչպես նաև տեղեկատվություն է տրամադրում Հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող և կարգավորվող որոշ գործողությունների վերաբերյալ, որոնք ուղղված են էլեկտրոնային գնումների օգտագործման օժանդակմանը:

Կարևոր է նշել, որ էլեկտրոնային հաղորդակցությունը (որը լայն առումով սահմանված է Հրահանգում) և էլեկտրոնային գործընթացները կարող են ավելի լայն առումով օգտագործվել, քան Հրահանգում նախատեսված հատուկ դեպքերում և նույնիսկ կարող են օգտագործվել գնումների ամբողջական գործընթացի իրականացման և պայմանագրից հետո իրականացվող շնորհման համար, էլեկտրոնային հայտարարությունից մինչև էլեկտրոնային վճարումը:

Էլեկտրոնային հայտարարություն-ԵՄՊՏ հայտարարությունների էլեկտրոնային տարբերակի օգտագործումը և հասանելիությունը. Հրահանգը պահանջում է որոշակի հայտարարությունների հրապարակում ԵՄՊՏ-ում՝ կապված որոշակի տեսակ և արժեք ունեցող պայմանագրերի հետ, որոնց նկատմամբ ԵՄ գնումների նորմերն ամբողջությամբ կիրառվում են: Այս պարտադիր հայտարարությունները հիմնականում պահանջվում են գնումների գործընթացի սկզբում՝ տնտեսվարող սուբյեկտներին հնարավորության առկայության մասին հայտնելու համար, և նաև գնումների ընթացակարգի ավարտին: Կարող են պահանջվել նաև այլ հայտարարություններ, օրինակ, երբ պայմանագրի մասին նախկին հայտարարության մեջ անհրաժեշտ է մտցնել փոփոխություն կամ գնումների գործընթացը կասեցվել է: Պետական պատվիրատուն կարող է նաև կամավոր կերպով հրապարակել հայտարարություններ ԵՄՊՏ-ում: Տե՛ս նաև *Գնումների վերաբերյալ կարճ գրություն 6- Հայտարարումը*:

ԵՄՊՏ-ում հայտարարություն տալու համար բոլոր ստանդարտ ձևաչափերն առկա են էլեկտրոնային եղանակով SIMAP համացանցային էջում. www.simap.europa.eu: SIMAP պորտալը ապահովում է Եվրոպական Միության պետական գնումների վերաբերյալ կարևոր տեղեկատվության հասանելիությունը: Ստանդարտ ձևաչափով հայտարարությունները կարող են լրացվել առցանց և ուղարկվել էլեկտրոնային եղանակով:

ԵՄՊՏ-ում հրապարակվող բոլոր հայտարարությունները հանրությանը հասանելի են առցանց www.ted.europa.eu համացանցային էջում և տնտեսվարող սուբյեկտները կարող են գրանցվել՝ համապատասխան պայմանագրային հայտարարությունների մասին ծանուցում ստանալու համար:

Էլեկտրոնային հայտարարումը ազգային մակարդակում

Շատ Անդամ երկրներ պահանջում կամ նախատեսում են ազգային

համացանցային էջերում պայմանագրերի էլեկտրոնային հայտարարությունների հնարավորության ապահովում, ներառյալ՝ ազգային գնումների գործակալության կամ պաշտոնական տեղեկագրի համացանցային էջը:

Էլեկտրոնային հայտարարությունը հիմնական պահանջ է շատ պայմանագրերի, ներառյալ՝ ԵՄ ֆինանսական շեմից ցածր շնորհվող պայմանագրերի համար: Սա թափանցիկության ապահովման և մրցակցության խրախուսման էժան և թափանցիկ միջոց է: Տե՛ս *Գնումների վերաբերյալ կարճ գրություն 15-Շեմից ցածր պայմանագրեր:*

Հայտարարումը մինչև գնումների գործընթացի սկիզբը՝ Նախնական տեղեկատվության հայտարարության կամ Գնորդի Բնութագրի օգտագործմամբ.

Հրահանգը նախատեսում է դրույթներ, որոնք թույլատրում են, սակայն չեն պարտադրում պետական պատվիրատուին նախազգուշացնել շուկան հնարավոր ապագա պայմանագրային հնարավորությունների մասին՝ Նախնական տեղեկատվության հայտարարությունն օգտագործելու միջոցով:

Պետական պատվիրատուի և տնտեսվարող սուբյեկտների համար այս ձևով նախնական հայտարարումը շահեկան է, մասնավորապես, երկու կողմերին նախապես ծրագրման մեջ օժանդակելու իմաստով: Եթե օգտագործվում է Նախնական տեղեկատվության հայտարարությունը, որոշ դեպքերում օրենքով նախատեսված ժամանակացույցերը կարող են նվազեցվել:

Գնորդի բնութագիր. Այս համատեքստում է, որ գնորդի առցանց բնութագիրը կարող է հատկապես օգտակար լինել: Պետական պատվիրատուն կարող է ստեղծել համացանցի վրա հիմնված իր սեփական “գնորդի բնութագիրը”: Գնորդի բնութագիրը ընդգրկում է պետական պատվիրատուի մասին ընդհանուր տեղեկատվություն՝ մրցույթի ընթացիկ հայտարարությունների, նախատեսված գնումների, կնքված պայմանագրերի և անվավեր ճանաչված ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվության հետ միասին:

Պետական պատվիրատուն կարող է հրապարակել Տեղեկատվության նախնական հայտարարության ստանդարտ ձևաչափը գնորդի իր բնութագրում: Երբ պետական պատվիրատուն կիրառում է այս մոտեցումը, այն պետք է ԵՄՊՏ ուղարկի միայն կարճ, ստանդարտ ձևաչափով Գնորդի բնութագրի Հայտարարություն:

Հայտարարությունը որոշակի պայմանագրի հնարավորության սկզբում.

Տնտեսվարող սուբյեկտներին պայմանագրի հնարավորության մասին հայտնելու նպատակով ԵՄՊՏ-ում պայմանագրի հայտարարության ստանդարտ ձևաչափի հրապարակումը պարտադիր է բոլոր տեսակի և արժեքի պայմանագրերի համար, ինչը նշանակում է, որ ԵՄ գնումների նորմերը կիրառվում են ամբողջությամբ: Պայմանագրի հայտարարության ստանդարտ ձևաչափերը առկա են էլեկտրոնային տարբերակով և կարող են լրացվել առցանց և ուղարկվել էլեկտրոնային եղանակով:

Պայմանագրերի հայտարարությունների էլեկտրոնային եղանակով ուղարկումը և պայմանագրային ու մրցության փաստաթղթերի հասանելիությունը էլեկտրոնային տարբերակով ունեն մի շարք առավելություններ, ներառյալ՝

Օրենքով սահմանված ժամանակացույցերի նվազեցում. Պայմանագրերի հայտարարությունների էլեկտրոնային եղանակով ուղարկման օգտագործումը խրախուսելու համար, օրենքով նախատեսված որոշ ժամկետներ նվազեցվել են: Օրինակ, սահմանափակ ընթացակարգում, օրենքով նախատեսված հայտարարությունը ԵՄՊՏ ուղարկելուց մինչև դիմումների ստացումն ընկած սովորական 37 օր ժամկետը կարող է նվազեցվել 7 օրով:

Ի հավելումն, երբ պայմանագրի հայտարարության հրապարակման օրը բոլոր հայտերը և պայմանագրային փաստաթղթերն անսահմանափակ և անմիջականորեն առկա են էլեկտրոնային տարբերակով պայմանագրի հայտարարության մեջ նշված հասցեում, մասնակցության դիմումների ստացման նվազագույն ժամանակացույցը կարող է նվազեցվել լրացուցիչ 5 օրով:

Բառերի առավելագույն քանակի սահմանափակման բացակայություն. Ոչ էլեկտրոնային եղանակով ուղարկված պայմանագրի հայտարարությունը կարող է պարունակել առավելագույնը 650 բառ: Պայմանագրի

հայտարարությունները, որոնք լրացվել և ուղարկվել են ԵՄՊՏ՝ առցանց էլեկտրոնային համակարգն օգտագործելու միջոցով, ենթակա չեն այս սահմանափակմանը: Հետևաբար, առկա է ավելի շատ ճկունություն և հայտարարվող պայմանագրի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության տրամադրման հնարավորություն:

Հայտարարումը գործընթացի ավարտին. Հիմնականում, պետական պատվիրատուն պարտավոր է հրապարակել պայմանագրի շնորհման հայտարարությունը՝ գնումների գործընթացի ավարտից և պայմանագրի շնորհումից հետո: Կրկին, սակարող է արվել առցանց և հրապարակվում է էլեկտրոնային տարբերակով:

Մասնակիցների որակավորումը. էլեկտրոնային գնումների գործընթացները կարող են օգտագործվել՝ օժանդակելու սահմանմանը, թե արդյոք մասնակիցներն ունեն համապատասխան որակավորումներ:

Էլեկտրոնային հավաստագրերը և էլեկտրոնային ատեստավորումը. Հրահանգը թույլատրում է պետական պատվիրատուի և մասնակիցների միջև էլեկտրոնային հաղորդակցման օգտագործումը, որը կարող է ներառել էլեկտրոնային հավաստագրերի և էլեկտրոնային ատեստատների ներկայացում: Մրանք սովորական թղթային գնումներում օգտագործվող հավաստագրերի և ատեստատների էլեկտրոնային համարժեքներն են, որոնք փաստաթղթային ապացույցներ են՝ ներկայացված մասնակիցների կողմից՝ որակավորման և որակական ընտրության առանձնահատուկ պայմաններին բավարարելու ապացուցման համար:

eCERTIS .. eCertis-ը անվճար առցանց տեղեկատվական գործիք է, որը սկիզբ է դրվել Եվրոպական Հանձնաժողովի կողմից 2010 թվականի հոկտեմբերին: Այն

պարունակում է 27 Անդամ երկրներում, թեկնածու և ԵՏՀ երկրների գնումների ընթացակարգերում հաճախ պահանջվող զանազան հավաստագրերի և ատեստատների մանրամասները: Այն օգնում է շահագրգիռ կողմերին հասկանալ, թե ինչ տեղեկատվություն է պահանջվում կամ տրամադրվում և նույնականացնել փոխադարձաբար ընդունելի համարժեքները: eCertis-ը հասանելի է հետևյալ համացանցային էջում. <http://ec.europa.eu/markt/ecertis/login.do>

Առցանց Համաեվրոպական Պետական Գնումներ (ԱՀԵՊԳ) ծրագիր ներքևից վեր մոտեցման արդյունքը, այն նաև ուղիներ է նախատեսում ստանդարտ տեղեկատվության տրամադրման արդիականացման համար, ներառյալ՝ Վիրտուալ Կազմակերպությունների Գործերի (ՎԿԳ) մշակումը՝ թղթային հավաստագրերը էլեկտրոնային ատեստատներով փոխարինելու համար: <http://www.peppol.eu/>

Տե՛ս *Գնումների վերաբերյալ կարճ գրություն 7- Մասնակիցների ընտրությունը՝ որակավորման և մասնակիցների ընտրության վերաբերյալ հավելյալ տեղեկատվության համար:*

Հայտերի առցանց ներկայացումը. սա նույնպես թույլատրելի է Հրահանգով և գործնականում իրականացվում է մի շարք ԵՄ Անդամ երկրներում:

Էլեկտրոնային ստորագրություն. Անդամ երկրներին թույլատրվում է պահանջել, որ էլեկտրոնային հայտերն ուղեկցվեն նախնական էլեկտրոնային ստորագրություններով: Էլեկտրոնային ստորագրությունները պահանջվում են նաև գնումների գործընթացի որակավորման և ընտրության փուլերում: Գործնականում, այս պահանջը կարող է բարդացնել փոխհամատեղելիության խնդիրը:

Գնումների գործիքները

Էլեկտրոնային աճուրդները. Էլեկտրոնային աճուրդը սկզբնական հայտերի ներկայացումը և գնահատումը ներառող ամբողջական մրցութային գործընթացի

իրականացումից հետո վերանայված վերջնական հայտերի հրավիրման մեթոդ է: Էլեկտրոնային աճուրդները կարող են օգտագործվել բաց ընթացակարգի, սահմանափակ ընթացակարգի և առանց հայտարարության նախապես հրապարակման բանակցային ընթացակարգի եզրափակիչ փուլում, ինչպես նաև շրջանակային համաձայնագրերի և գնումների դինամիկ համակարգերի համաձայն իրականացվող փոքր մրցույթների համար:

Էլեկտրոնային աճուրդները ներառում են առցանց էլեկտրոնային համակարգ, որը թույլատրում է մասնակիցներին ներկայացնել նոր, ավելի ցածր գներ և/կամ իրենց հայտերի տարրերի այլ վերանայումներ որոշակի պայմանագրի համար՝ իրական ժամանակում և այլ մասնակիցների հետ ուղղակի, անանուն մրցակցության մեջ:

Էլեկտրոնային աճուրդները կարող են օգտագործվել միայն, եթե մասնագիրը կարող է սահմանվել բավարար ճշտությամբ: Հայտի միայն այն տարրերը, որոնք հարմար են միայն էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ գնահատելու համար, կարող են լինել էլեկտրոնային աճուրդի առարկա: Էլեկտրոնային աճուրդները չպետք է օգտագործվեն ծառայությունների մատուցման որոշակի պայմանագրերի և որոշակի աշխատանքների կատարման պայմանագրերի համար, որոնք կապված են մտավոր գործունեության հետ, օրինակ շինությունների նախագծումը:

Բոլոր դեպքերում էլեկտրոնային աճուրդի իրականացման համար պետական պատվիրատուն պետք է պայմանագրի սկզբնական հայտարարության մեջ նշի, որ այն մտադիր է օգտագործել էլեկտրոնային աճուրդը:

Էլեկտրոնային ցուցակներ. Էլեկտրոնային ցուցակներին հղում է արված Հրահանգի Ներածական մասում՝ որպես պետական գնումներին օժանդակող գործիք, մասնավորապես որպես շրջանակային համաձայնագրերի կամ գնումների դինամիկ համակարգերի համաձայն իրականացվող գնումներին մասնակցելու միջոց:

Պարզագույն առումով, էլեկտրոնային ցուցակները թղթային ցուցակների էլեկտրոնային տարբերակներն են, որոնք ցուցադրում են մասնակիցների ապրանքների կամ ծառայությունների մանրամասները: Օրինակ, երբ պետական պատվիրատուն ստեղծում է մեկ մատակարարով շրջանակային համաձայնագիր,

որը հետագայում գործարկում է՝ օգտագործելով մատակարարի կողմից ստեղծված էլեկտրոնային ցուցակը, որը նկարագրում է արտադրանքը և գները նախապես համաձայնեցված կառուցվածքային ձևով: Երբ գնումը կատարվում է շրջանակային համաձայնագրով, գնորդը կարող է ստանալ տեղեկատվությունը առցանց և, եթե հնարավոր է նաև էլեկտրոնային եղանակով պատվիրելը, առցանց իրականացնել գնման ամբողջ գործարքը:

Հնարավոր առավելություններն ընդգրկում են գործարքային և վարչական ծախսերի նվազեցումը, պատվիրման գործընթացի պարզեցումը և թույլատրված համակարգերից դուրս անթույլատրելի գնումների նվազեցումը:

Գնումների դինամիկ համակարգեր. Հրահանգը պարունակում է հատուկ դրույթներ, որոնք ընդգրկում են գնումների դինամիկ համակարգի (ԳԴՀ) ստեղծումը և գործարկումը: ԳԴՀ-ն ամբողջապես էլեկտրոնային համակարգ է, որը կարող է օգտագործվել կրկնվող, ստանդարտ գնումների համար: Գնումների դինամիկ համակարգը գործարկում է որպես գործող, առցանց, համացանցի վրա հիմնված շրջանակային համաձայնագիր, որին տնտեսվարող սուբյեկտները կարող են միանալ ցանկացած ժամանակ:

Պետական պատվիրատուն հայտարարում է համակարգի մասին՝ օգտագործելով բաց ընթացակարգը: Այնուհետև շահագրգիռ տնտեսվարող սուբյեկտները ներկայացնում են ցուցադրական հայտեր, որոնք սահմանում են պահանջի մատակարարման պայմանները: Համապատասխան որակավորում ունեցող բոլոր տնտեսվարող սուբյեկտները, որոնք ներկայացրել են համապատասխան ցուցադրական հայտեր ընդունվում են համակարգ: Նոր տնտեսվարող սուբյեկտները կարող են դիմել մասնակցության համար և ներկայացնել ցուցադրական հայտեր գնումների դինամիկ համակարգի գործունեության ընթացքում: Բոլոր տնտեսվարող սուբյեկտները կարող են նաև ցանկացած ժամանակ թարմացնել իրենց ցուցադրական հայտերը՝ բարելավելով դրանք և ամբողջ այս տեղեկատվությունը պահվում է էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային ցուցակները կարող են օգտագործվել այս համատեքստում:

Պետական պատվիրատուն, որը ցանկանում է գնում կատարել համակարգից, պետք է հայտեր ներկայացնելու առաջարկ ուղարկի համակարգում գրանցված բոլոր

տնտեսավարող սուբյեկտներին, ինչպես նաև հայտարարի հնարավորության մասին ԵՄՊՏ-ում: Սա մասնակցելու հնարավորություն է տալիս համակարգում չընդգրկված տնտեսավարող սուբյեկտներին: Գնում կատարող պետական պատվիրատուն այնուհետև պատվիրում է հաջողակ մասնակցից:

Տե՛ս նաև *Գնումների վերաբերյալ կարճ գրություն 11- Գնումների գործիքները*:

Էլեկտրոնային գնումների համակարգի ներկայացման և գործարկման վերաբերյալ գրություն

Կարևոր է հասկանալ, որ էլեկտրոնային գնումն ընդամենը գործիք է: Այն չի ուղղի գնումների սկզբնական վատ փորձը և այն հրաշք լուծում չէ գնումների համակարգի գործարկման մեջ հանդիպող հիմնական խնդիրների համար: Վատ փորձը կարող է հեշտորեն պահպանվել էլեկտրոնային գնումների համակարգում: Էլեկտրոնային գնումները, հետևաբար, չեն փոխարինում անհրաժեշտությունը՝ ապահովելու, որ գնումների գործընթացները հիմնականում համապատասխանեն Հրահանգի պահանջներին և բավարարեն առանձին գնումների կատարման պայմանները:

Արժե նշել նաև, որ էլեկտրոնային գնումների գործիքների և գործընթացների ներդրումը կարող է ծախսատար և դանդաղ լինել և կարող է իրենից խնդիր ներկայացնել: ԵՀ-ն իր վերոնշյալ Կանաչ Փաստաթղթում ընդգծել է մի շարք խնդիրներ, որոնք ծագել են էլեկտրոնային գնումները ԵՄ Անդամ երկրներում կիրարկելու ընթացքում, ներառյալ.

- **Տեխնոլոգիաները.** Տեխնոլոգիաները հասանելի են՝ թույլատրելու էլեկտրոնային գնումները գնումների գործարքի իրականացման բոլոր փուլերում, բայց տեխնոլոգիական լուծումները կարող են լինել շատ ծախսատար և դրանցից որոշները կարող են չհամապատասխանել գնումների կոնկրետ փուլերի: Որոշ Անդամ երկրներում սա հազնեցրել է “խնդիրների ժամանակավոր լուծման”, ինչը ներառում է տեխնիկապես ավելի հեշտ լուծումներ կամ համակցում է առցանց և անցանց հաղորդակցման ձևերը: Սա նկատվել է, օրինակ, ընտրության և գնահատման կամ ավտոմատացված գնահատման համար ապացուցողական նշանակություն

ունեցող փաստաթղթերի տրամադրման դեպքում, մասնավորապես՝ ավելի բարդ պայմանագրերի դեպքում:

- **Պետական պատվիրատուի մասնակցությունը.** Եթե էլեկտրոնային գնումների օգտագործումը պարտադիր չէ, պետական պատվիրատուների կողմից անցումն այդ համակարգին դանդաղ է տեղի ունենում: ԵՇ կարծիքով սակարելի է վերագրել ներքին համակարգի վերակազմավորման ծախսերին և առավելությունների մասին տեղեկատվության պակասին: Կա անհանգստություն էլեկտրոնային համակարգում ներդրումներ թվացյալ ռիսկերի վերաբերյալ, ներառյալ՝ տեխնոլոգիական ռիսկերը և գոյություն ունեցող տեղեկատվական համակարգերի հետ ինտեգրացիան, ինչպես նաև անվտանգության և հսկողության մեխանիզմները:
- **Մատակարարների մասնակցությունը.** Մատակարարները ոչ միշտ են տեսնում անցում կատարելու օգուտը: Հատկապես ՓՄՁ-ները անհանգստացած են, որ իրենք դուրս կնդվեն գնումների շուկայից էլեկտրոնային գնումների ներմուծմամբ՝ աճող միավորման և կենտրոնացման համակցությամբ: Մեկ այլ խնդիրը, որն ազդեցություն ունի մատակարարների վրա, էլեկտրոնային գնումների որոշ գործընթացների չափազանց բարդ պահանջներն են, մասնավորապես՝ կապված մատակարարների գրանցման և մասնակցի նույնականացման գործընթացների հետ: Եթե այս գործընթացները կամ պահանջները սահմանափակում են օտարերկրյա մասնակցի մասնակցությունը, սակայնակա Հրահանգի և Պայմանագրի պահանջներին:
- **Միասնական չափանիշի բացակայությունը.** Մատակարարները բախվում են էլեկտրոնային գնումների տարբեր պլատֆորմների, միջոցների և խնդիրների՝ կապված համակարգի գործառության հատկանիշների հետ: Մա մատնացույց է անում էլեկտրոնային գնումների համակարգի ստանդարտացման և հավասարեցման անհրաժեշտությանը: Մա կապված է նաև ազգային էլեկտրոնային լուծումների փոխադարձ ճանաչման բացակայությունից ծագող խնդիրների հետ:

Հետագա ընթերցանություն.

- ԵՄ Հանձնաժողով (2010), *ԵՄ-ում էլեկտրոնային գնումների օգտագործման տարածման վերաբերյալ Կանաչ փաստաթղթում*- COM (2010), 571 վերջնական և կից Հանձնաժողովի աշխատակազմի աշխատանքային փաստաթուղթ SEC (2101) 1214 վերջնական
- Եվրոպական Հանձնաժողովի համացանցային էջ՝ էլեկտրոնային գնումների վերաբերյալ. http://ec.europa.eu/internal_market/publicprocurement/e-procurement/index_e